ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի ասպիրանտ
ՀՏԴ 821.19.0

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԱՍՈՒՆՑԻ ՀԵՐՈՄՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. սասունցիներ, կորսված հայրենիք, ցավ, վրեժ, ողբերգություն, հերոսություն, հավատարմություն, արմատներ, կամք, պայքար, վիշտ, ծիծաղ, կարոտ:

Ключевые слова и выражения: герои из Сасуна, потерянная родина, боль, месть, трагедия, героизм, верность, корни, воля, борьба, печаль, смех, тоска.

Key words and expressions: heroes from Sason, lost homeland, pain, revenge, tragedy, heroism, fidelity, roots, will, fight, sadness, laugh, longing.

Լիբանանահայ արձակագիր, հրապարակախոս, բանաստեղծ, խմբագիր Սիմոն Սիմոնյանը (1914 – 1986) մեկն էր հայ ժողովրդի այն զավակներից, ովքեր ամբողջ կյանքն ապրելով օտար երկինքների տակ՝ ոչ մի րոպե չդավաճանեցին իրենց արյան կանչին, չմոռացան պատմական հայրենիքն ու չդադարեցին հուսալ, որ մի օր իրենք՝ աշխարհում ամենամեծ անարդարության զոհերը՝ հայրենազրկվածները, նորից տեր կդառնան իրենց իսկական ճակատագրին: Իր գրականությամբ, որ հետաքրքիր ու լայն առումով ինքնատիպ է, Սիմոն Սիմոնյանը հնարավորություն տվեց ևս մեկ անգամ ճանաչելու այդ տարօրինակ մարդուն՝ Սասունից զրկված սասունցուն, որ դատապարտված էր ապրելու երկու կյանքով, մեկը՝ իրական ժամանակի ու տարածության մեջ, մյուսը՝ իր հիշողությունների, կիսատ կռվի, մխացող ցավի ու հար բորբոքուն վրեժի:

Սիմոն Սիմոնյանի «Լեռնականներու վերջալոյսը» գիրքը՝ նրա կյանքի գիրքը, լույս տեսավ Բեյրութում՝ 1968թ.: Սա մի գիրք է, որի շուրջ գրողը մտածել էր երկար տարիներ, սա մի գիրք է, որի հերոսները անխզելիորեն՝ թե՛ արյունով ու արմատներով, թե՛ աշխարհազգացողությամբ ու մտածելակերպով, թե՛ իրենց կյանքի անվերջանալի թվացող ողբերգությամբ ու վշտի ծիծաղով հոգեհարազատ էին միմյանց և իրեն՝ հեղինակին:

Գրքի ժանրային բնութագիրը դժվար է տալ, դժվար է բացատրել կառուցվածքը, դժվար է գրականագիտական որևէ ընդունված չափանիշով դիտարկել այն: Գուցե սա վե՞պ է՝ առանձին պատմվածքների տեսքով, ավելի շուտ՝ ոչ թե վեպ, այլ զրույց, զրույց, ոչ թե երկխոսություն, որովհետև խոսող կողմերը երեքն են՝ սասունցի հերոսները, ընթերցողը և այդ երկուսի միջև հեղինակը՝ կանգնած հին և նոր աշխարհների միջնագծում: Գուցե սա գիրք չէ, այլ հենց ինքը՝ կյանքն է, որովհետև «Անոնք, այս

պատմուածքներուն Սասունցիները, իրական մարդեր են, եւ ես անոնց վրայ գրած եմ իրական պատմուածքներ, կեանքի չափ ու անկե ավելի իրական…»[1]:

Երբ 21-րդ դարի երկրորդ կեսի արևմտյան որոշ տեսաբաններ, մասնավորապես ֆրանսիացի մտածող Ռոլան Բարտը առաջ էր քաշում «հեղինակի մահվան» վարկածը[2], թերևս, հաշվի չէր առնվել գրականության այս ինքնաբուխ տեսակը, երբ հեղինակը ոչ թե օտարվում, հեռանում է իր ստեղծած գրականությունից, այլ, ընդհակառակը, ձուլվում, միանում է նրան՝ ինքն էլ իր կերտած հերոսներից մեկը դառնալով: Հենց այդպիսի գրականություն է Սիմոն Սիմոնյանինը:

Գիրքը սկզբից ևեթ դրվատական կարծիքների արժանացավ. Հիացական կերպով արտահայտվեցին Հ. Շիրազը, Խ. Դաշտենցը[3], Ա. Ալիքյանը[4]: Գրախոսները շեշտը դնում էին, հիմնականում, այն մեծ սիրո, որ տածում է հեղինակն իր հերոսների հանդեպ, ինչպես նաև նրա ոճի ինքնատիպության ու բնականության վրա:

Սիմոն Սիմոնյանի արձակին բնորոշ է պատումի հախուռն բնույթը: Նա սկսում է միանգամից՝ առանց երկար – բարակ անցումների՝ ընթերցողին անմիջապես ներքաշելով իրադարձությունների հորձանուտը: Հեղինակը մի շնչով, մի քանի տողով կարծես տալիս է պատմվածքի ուրվագիծը, ներկայացնում իրերի նախնական վիճակը ու հետո, ասես մի փոքր հանգստանալով, բացում փակագծերը, տեղին մանրամասներով հարստացնում ու հարստացնում նյութը՝ երբեք չձանձրացնելով իր ընթերցողին: Իսկ այդ նյութը, իսկապես, տարողունակ է, ուստի, խուսափելու համար դրա սոսկ նկարագրական – պատմողական վերլուծությունից և հասկանալով լիակատար մեկնաբանության անհնարինությունը՝ փորձենք դիտարկել այն մի քանի տեսանկյունից՝ սասունցիները և Սասունը, սասունցիները և ազգային – ազատագրական պայքարի նրանց ընկալումը, սասունցիները և Աստված, սասունցիները և օտար երկիրը, և, վերջապես, սասունցիները և հեղինակը:

Եղեռնից հետո արևմտահայության մազապուրծ հատվածները, հաստատվելով օտար երկրներում, փորձում էին ամեն կերպ պահպանել իրենց ազգային ինքնությունը: Սփյուռքը, այսպիսով, դառնում էր կեցության

---

[1] Ս. Սիմոնեան, Լեռնականներու վերջալոյսը, Պէյրութ, 1968, էջ 178: Այս գրքից կատարվելիք հետագա մեջբերումների էջը կնշվի շարադրանքում:

[2] Տե՛ս Барт Р. Избранные работы: Семиотика. Поэтика, Москва., 1994, с. 384-391:

[3] Տե՛ս Ս. Գրիգորյան, Բազմատաղանդ երախտավորը, Երևան, 1999, էջ 45:

[4] Տե՛ս Սփյուռք, 1969, թիվ 37:

ինքնակա մի նոր ձև, որ թելադրում էր իր օրենքները[5]: Օտար մշակույթից, օտար ազդեցությունից հնարավորինս խուսափելու բնազդական մղումը պարտադրում էր համախմբվել, միասնական ճակատ կազմել ընդդեմ այն ամենի, ինչը հայկական չէր կամ, առնվազն, խորթ էր հայի էությանն ու մտածողությանը: Հայեցիության ու հայկականության պահպանումը հաճախ իրականացվում էր, եթե կարելի է ասել, նեղ աշխարհագրական կտրվածքով, երբ «հայ» ասելով խարբերդցին հասկանում էր միայն խարբերդցի, արաբկիրցին՝ արաբկիրցի, սասունցին՝ սասունցի և այսպես շարունակ: Գրականության մեջ այս հետաքրքիր երևույթի ամենացայտուն դրսևորումներից մեկը տեսնում ենք Հակոբ Կարապենցի «Աբգար ամու օտար հարսը» պատմվածքում, որի հերոսի համար «… Արաբկիրը մի առանձին աշխարհ էր, մի առանձին երկիր ու ժողովուրդ, որին պատկանելու համար միայն մեկ նախապայման էր պետք. Լինել արաբկիրցի»[6]: Համանման կերպով Սիմոնյանի հերոսների համար բացառիկ, անկրկնելի ու աշխարհի միակ օրհնյալ վայրն է իրենց ծննդավայր Սասունը, ու այդ պատճառով էլ «Այս աշխարհի վրայ խռովութիւն կայ: Այդ խռովութիւնը մեծ է ու կը նմանի անդնդախոր ձորի մը, որուն մէկ կողմը հավաքուած են միայն Սասունցիներ, իսկ միւս կողմը՝ երկրի բոլոր մարդերը»: (էջ 15)

Սիմոնյանի հերոսների համար Սասունը սոսկ ծննդավայր չէ, այլ իրենց աշխարհընկալման ու աշխարհայացքի, հոգեբանության ու հոգեկերտվածքի ակունքը. Սասունցի լինելով են պայմանավորված նրանց բոլոր՝ մանր թե մեծ գործողությունները, սկզբունքները, որոնցով առաջնորդվում են կյանքում: Կան անբեկանելի օրենքներ, և դրանցից ցանկացած շեղում ահավոր ընդվզում ու զարմանք է առաջացնում: Սասունցու բնավորության ամենախիստ հատկանիշների կրողն է հեղինակի հայրը՝ Օվեն՝ որին էլ նվիրված է գիրքը. «Հօրս՝ Օվէին. Սասնոյ Կերմաւ (Ակերմ) գիւղէն՝ Հայկ Նահապետի պէս անտաշ ու ըմբոստ մարդուն, որուն կը պարտիմ այս պատմուածքները՝ արիւնէս ետք»:

Անչափ հետաքրքիր ու բազմաշերտ է հոր կերպարը ու ավելի հետաքրքիր՝ նրա և որդիների փոխհարաբերությունները: Խորապես ողբերգական ճակատագրի տեր այս մարդուն հանդիպում ենք մի քանի անգամ՝ «Ան ուրիշ էր», «Սահմանային վեճ» պատմվածքներում, «Պատմվածք պատմվածքներուս մասին» բաժնի պարզապես ‹‹Թատրերգություն» կոչվող փոքրիկ պիեսի ու «Հայրս» ակնարկի մեջ:

[5] Տե՛ս Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1987, էջ 14:
[6] Հակոբ Կարապենց, Երկեր, Երևան, 1995, էջ 209:

«Պելաւայ Յակոն բացաւ իր բերանը» պատմվածքի գլխավոր հերոսը ևս, ինչպես խոստովանում է հեղինակը, իրականում Կերմաւայ Օվէն է: Օվեն ամուսնացել է իր լավագույն ընկերոջ՝ Պետոյի այրու հետ («Ան ուրիշ էր»): Օվեն գիտի, որ կինը միշտ սիրել է ու սիրելու է միայն իր Պետոյին և որ մահից հետո միանալու է նրան, չնայած. «Ի վերջոյ մեր սիրոյն՝ մայրս պիտի լքէ իր Պետոն և գայ մեր մօտ. Այսպիսով մենք հոն եւս պիտի կազմենք մեր նո՛յն տունը: Եւ Պետոն, խե՛ղճ Պետոն պիտի մնայ դարձեալ միանակ»: (էջ 10) Հայրը ապրում է անցյալում, որդիները ներկայի ու ապագայի մարդիկ են. Նրանց միջև սարսափելի անդունդ կա. «Հայրս սասունցի է ու կկենա ձորին այն կողմը, ուր հաստատուած են իր հարազատ հայրենակիցները, իսկ մենք՝ իր որդիները, կը կենանք միւս կողմը…»: (էջ 14) Հոր համար անհասկանալի, անընդունելի է այն հանգամանքը, որ «սեֆերպելիք»՝ ջարդ տեսած հայը կարող է անհոգ ծիծաղել, կարող է վայելել ժամանակակից կյանքի տված հարմարությունները, թութակի նման կրկնել եվրոպացիների՝ հայերի առջև թուրքից ոչ պակաս մեղավոր այդ կեղծավոր «էժնեպիների» վարքուբարքը: Կարծրացած հոգու տեր այդ մարդը աշխարհում միայն մի հարազատ հոգի ունի՝ իր հորեղբոր որդին՝ Ձիավոր Ավեն:

Ավեն հավերժական միայնակ հերոսն է, մարդ, որ կորցրել է նորատի կնոջն ու հարազատներին: Ավեի մխիթարությունն իր նժույգն է՝ որպես ամենայն ազնվության ու գեղեցիկի մարմնացում. «Աւէն լաւ ձիավոր է. Ունի աննման ձի մը, զոր կը պաշտէ, ինչպես հայրս կը պաշտէ հալալ լոյսը: Ձիէն և լոյսէն ետք, հայրս կը սիրէ Աւէն, Աւէն ալ՝ հայրս»: (էջ 15) Այս երկու դժբախտ մարդիկ՝ Օվեն և Ավեն, հարազատ են ոչ միայն արյամբ, ոչ միայն իրենց անցած ճանապարհով, այլև աշխարհայացքով ու հոգեկերտվածքով. Դրա շնորհիվ էլ նրանք մխիթարություն են գտնում իրար մեջ: Ավեի կերպարին շատ մոտ է մեկ այլ կերպար՝ լիբանանահայ գրող Կարո Սասունու «Երկրի ցաւ ունիմ»[7] պատմվածքի համանուն հերոսը: Երկու հերոսներն էլ իրական կյանքին են պատկանում, երկու հերոսներն էլ Եղեռնի պատճառով իրենց իսկական ճակատագիրն ու կյանքի ուղին կորցրած մարդիկ են, երկուսն էլ «երկրի» ցավով տառապողներ են, հետևապես, չնայած Կարո Սասունու գիրքը՝ «Կեանքի յորձանուտին մէջ», լույս է տեսել «Լեռնականներու վերջալոյսից» վեց տարի առաջ, մենք չենք կարող խոսել գրական ազդեցության մասին, որովհետև երկու գրողներն էլ պարզապես ներկայացրել են իրական մարդկանց՝ առանց ավելորդ պաճուճանքի: Սա այն դեպքն է, երբ իրականությունը պարզապես պարտադրում է գրողին:

[7] Տե՛ս Կարօ Սասունի, Կեանքի յորձանուտին մէջ, Պէյրութ, 1962, էջ 29 - 31:

Սիմոնյանի սասունցի հերոսները խորապես ողբերգական մարդիկ են: Նրանք բոլորն ապրում են իրենց ընդհանուր ողբերգությունը՝ Եղեռնն ու հայրենազրկումը, հարազատների ու բարեկամների կորստյան սարսափելի ցավը: Բայց այդ բոլոր հերոսների ողբերգությունը կրկնակի է, որովհետև նրանցից յուրաքանչյուրն ունի նաև իր անձնական նոր ողբերգությունը: Բեռնակիր Օհանը («Եսի հե՛րս ունիմ»), փռապան Սահակը («Թող մեռնի՛ երկրորդ Սահակը»), «մինակուկ» Մանոն («Եսի մինակուկ մարդ իմ») ոչ միայն Եղեռնի զոհեր են, այլև արդեն կյանքի երկրորդ փուլում իրենց կանանց կողմից խաբված ու լքված ամուսիններ: Հային բաժին հասած բախտը փոխել է այդ մարդկանց արտաքինն ու ներքինը, աղճատել էությունը, և մարդիկ, որ պետք է աշխարհաշեն աշխատանքի լծվեին, դարձել են անտուն – անօթևան մուրացկաններ:

Բեռնակիր Օհանը վրեժով է լցված Աստծո դեմ, քանի որ վերջինս երկիր է ուղարկել իր «խաֆիաներին»՝ լրտեսներին. Այդ լրտեսներն են… Անդրանիկը, Օհանի կինը և անգլիացիները: Անգլիացիներին Օհանն ատում է նրանց նենգության, կնոջը՝ դավաճանության համար: Եվ եթե կնոջ ու անգլիացիների հանդեպ Օհանի արդար զայրույթը փոխանցվում է ընթերցողին, ապա Անդրանիկի հանդեպ վերաբերմունքը հակասական մտքեր է առաջացնում: «Անդրանի՛կ, ձեր երկիր սար չըկե՞ր (չկա՞ր), ձոր չկե՞ր, ի՞նչ ուզեցիր մըզնե… Ծաղիկ եք (էիք), ձըր երկիր ծաղկէք (ծաղկէիք), կտրիճ եք (էիք), ձըր երկիր կտրճութիւն էնէք (ընէիք): Էկաք մեզի յեղափոխութի՞ւն սովրցնելու: Մըքի (մենք) մըր պապերուց օրէն, մըր թոխումէն (սերմ, սերունդ), կռուող ենք, տուշմանի առաջ վիզ չընք ծռէ…»: (էջ 26) Անդրանիկին Օհանն անձամբ է ծանոթ, միասին հաց են կերել Սպաղանք գյուղում, բայց խնդիրն Անդրանիկի անձը չէ, այլ այն, որ Օհանի համար նա հայկական հեղափոխությունն է խորհրդանշում: Սիմոն Սիմոնյանի հերոսը վստահ է, որ Սասունն առանց այն էլ պատրաստ էր ապստամբության և պետք էր ոտքի հանել հայկական մյուս՝ եթե կարելի է ասել «պակաս» ազատատենչ շրջանները, ոչ թե հենվել «մէկ ու կէս ֆշանկով» կռվելու տրամաբանությանը:

Օտար երկրում ապաստանած այս սասունցի հերոսները անընդհատ վերապրում ու վերապրում են իրենց ցավը, նրանք մտքով այնտեղ են՝ Սասունում, նրանք փորձում են հասկանալ՝ ո՞րն էր էր իրենց մեղքը: Օհանը հասկանում է. Մեղքը իրենց պատրաստ չլինելն էր: «Լեռնականներու վերջալոյսից» տարիներ հետո լույս տեսած «Մարութա սարի ամպերը» գրքում Մուշեղ Գալշոյանի հերոսներից մեկը այսպես էր ձևակերպելու այդ

«մեղքը». «Հե՛յ գիտի, հաա՛, այն ժամանակ էր պետք հրացանը, կոտորումի ժամանակ հայ ամեն տղամարդու ձեռքին այդպիսի մի մոսին էր պետք»[8]:

Ֆիդայու, հպարտ ու անկախ հերոսի իսկական տիպար է քեռի Մակարը («Նա իր հոր զաւակն է»): Քեռի Մակարը, որ աշխարհ էր եկել մեղվաբուծությամբ զբաղվելու համար, «իր կամքից անկախ պատճառներով» ստիպված եղավ զբաղվել մարդու արյուն թափելով: «Եթէ հայ ժողովուրդը չընդվզեր, պիտի ընդվզէր Սասունը: Եթէ չընդվզէր Սասունը, պիտի ընդվզէր Քեռի Մակարը և մինակուկ զէնք պիտի վերցնէր Սուլթաններու կանոնավոր և անկանոն զօրքերուն դէմ: Ու հին օրերուն պիտի կոչուէր Առիւծ Մհեր կամ Սասմայ Դաւիթ, և մեր օրերուն՝ Քեռի Մակար»: (էջ 88)

«Նա իր հոր զավակն է» պատմվածքում դարձյալ շոշափվում է ազգային-ազատագրական պայքարի թեման: Թուրքերի հարձակումից հետո գյուղ վերադարձած Մակարն ու նրա ընկերը ճանապարհին հանդիպում են ազգային գործիչներից մեկին՝ «պարուն» Վահանին. «Ճանչցան զայն: «Պարուն» Վահանն էր, դուրսեն եկած ղեկավարը, որ, պիտի վարեր Սասնոյ այս երկրորդ ապստամբությունը: Եւ «պարուն» Վահանը պառկեր էր սառած գետինը, կարծէք երկնցած ըլլար մարգագետնին վրայ: Չէր վիրաւորուած. Ողջ – առողջ էր, միայն թե շատ պարարտ ըլլալուն՝ իրեն համար անկարելի եղած էր ժողովուրդին հետ անցնիլ դիմացի զառիվերէն»: (էջ 90) «Պարուն» Վահանին միայն եզների միջոցով է հնարավոր լինում առաջ տանել: Երբ Մակարը և մյուս մարտիկները՝ ազատության ու կյանքի համար իրական պայքարողները, խելացի խորհուրդ են ակնկալում «պարուն» Վահանից, վերջինս պատասխանում է. «Թիւրքերը միջազգային օրէնքով իրաւունք չունին թնդանօթ գործածելու անզէն ժողովուրդին վրայ…» (էջ 91): Անկախ Չարենցի «Ազգային երազի» Ահոյին հիշեցնող այս կերպարի հանդեպ վերաբերմունքից (իսկ հեղինակի երգիծանքն ու արհամարհանքն ակնհայտ են), պարզ է մի բան. Կար իրականությունը, այն է՝ ավերված ու թալանված հայրենիք, սպանված ժողովուրդ:

«Եսի հերրս ունիմ» և «Նա իր հոր զաւակն է» պատմվածքներում սասունցիները պարզ կերպով մատնանշում են իրենց կարծիքով (թերևս՝ նաև հեղինակի) ազգային-ազատագրական պայքարի երկու թերությունները, այն է՝ հստակ մշակված ծրագրի և ուժեղ ղեկավարության բացակայությունը: Ինչևիցե, Քեռի Մակարի նմանները պայքարելու էին մինչև արյան վերջին կաթիլը, չէին ընկճվելու, չէին հուսահատվելու՝

[8] Մ. Գալշոյան, Մարութա սարի ամպերը, Երևան, 1981, էջ 221:

նախընտրելով արժանապատիվ մահը, ի տարբերություն «պարուն» Վահանների:

«Լեռնականներու վերջալոյսը» գրքում Սիմոն Սիմոնյանը աննկարագրելի վարպետությամբ համադրում է ողբերգականն ու զավեշտականը: Այս առումով արտասովոր ստեղծագործություն է «Երեք օրակարգերը»: «Սասունցիները, որոնք ոչ հնդեւրոպական են, ոչ սեմական և ոչ քամեան, և հազիւ արենակցական հեռաւոր կապով կապուած են Հայերու հետ, Հալեպի մէջ ունին իրենց խորհրդարանին սեպհական շէնքը, որ կառուցուած է իրենց ազգային ճարտարապետութեան ոճին համաձայն, և ուր կը հաւաքուին Սասնոյ բոլոր շրջաններուն պատկառելի երեսփոխանները և կը գումարեն իրենց նիստերը՝ գրեթէ ամեն օր»: (էջ 117)

Այս «երեսփոխանները» սարսափելիորեն միամիտ են, բայց և սարսափելիորեն կռվազան, սարսափելիորեն շատ են սիրում միմյանց, բայցև սարսափելիորեն անհանդուրժող են ու անզիջում: Հայրենիք կորցրած այս մարդիկ անընդհատ վիճում են իրար հետ այն բանի համար, թե ում է պատկանում Սասնո այս կամ այն գյուղը, այս կամ այն կալվածքը. Նրանք չեն կարող, թերևս չեն ուզում հասկանալ կամ պարզապես գիտակցական ինքնախաբեությամբ են զբաղվում՝ իրենց «սեփականության» մասին խոսելով ներկա ժամանակով: Անգամ աշխարհում ամենահարազատ երկու մարդիկ՝ հեղինակի հայր Օվեն և նրա հորեղբորորդի Ավեն «սահմանային վեճ» ունեն:

Եթե Խաչիկ Դաշտենցի հերոսները հիմնականում «բրաբիոն ծաղիկ որոնողները»՝ հայդուկներն էին՝ կիսաառասպելական մարդիկ, ապա Սիմոն Սիմոնյանի հերոսները պարզ, հասարակ, բայց ոչ պակաս հերոսական մարդիկ են, որովհետև, այնուամենայնիվ, կարողացել էին ապրել: Այս առումով Սիմոն Սիմոնյանի հերոսներին ավելի շատ նման են Մուշեղ Գալշոյանի հերոսները: Բայց այնքան տարբեր է երկու հեղինակների ոճը:

Սիմոն Սիմոնյանի սասունցիները անխտիր չափազանց դրամատիկ մարդիկ են: Նրանք, ճիշտ է, վստահ են, «որ այս աշխարհը կարծեք մէկ գաւառն ըլլայ Սասնոյ», բայցև ստիպված են հարմարվել նոր կյանքին:

Սիմոն Սիմոնյանը սիրում է իր հերոսներին, ավելի շատ նրանցն է, քան նոր կյանքինը: Սիրում է և ընթերցողին է փոխանցում սերը այդ նահապետական, միամիտ, կռվարար ու անհանդուրժող, բայցև անասելիորեն բարի ու արդար մարդկանց հանդեպ: Նրանց մասին պատմում է ներողամտաբար ու հումորով, բայց միշտ՝ պատկառանքով: Անընդհատ նորից ու նորից է անդրադառնում նրանց, որովհետև նրանք իր կյանքի մի մասն են:

«Լեռնականներու վերջալոյսը» հետաքրքիր է ոչ միայն բովանդակության, այլև կառուցվածքի ու հեղինակի ոճի տեսանկյունից: Սիմոն Սիմոնյանը մերթ ժամանակակից գրող է, մերթ կարծես բանահյուսական նյութի ասացող, մերթ ողբերգական դեպքերի տարեգիր է, մերթ Օտյանի գրչի տեր երգիծաբան:

Գրքի «Պատմուածք պատմուածքներիս մասին» բաժնում, մեկ անգամ էլ անդրադառնալով իր հերոսներին ու նրանց կյանքի չբացահայտված կողմերին, Սիմոն Սիմոնյանը ոչ միայն նոր կյանք է տալիս նրանց, այլև, կարծես, իր վերջին պարտքն է հատուցում: Հեղինակը չգիտի, իսկապես վստահ չէ՝ ճի՞շտ արեց ինքը՝ այդ մարդկանց մասին գրելով, բայց մի բան պարզ է՝ չէր կարող չգրել. «Լո՛յս իջնի ձեր գերեզմաններուն, ո՛վ գաւազանակիր վարչականներ… Օվէ – տղան գրեց ձեր մասին… «Օրէնքո՞վ»… Միւս աշխարհքին մէջ Շեփէն թող ըլլայ մեծ դատաւորը…»: (էջ 285)

«Լեռնականներու վերջալոյսին» ծանոթացած ընթերցողը, սակայն, վստահ է, որ գիրքն անպայման պետք է գրվեր՝ որպես ոչ միայն սասունցիների, այլև համայն հայության կյանքի և գոյության իրավունքի, արդար դատի ու պահանջի ևս մեկ իրեղեն ապացույց:

Գ. Հարությունյան

Սիմոն Սիմոնյանի սասունցի հերոսները

Ամփոփում

Հոդվածը նվիրված է լիբանանահայ գրող Սիմոն Սիմոնյանի «Լեռնականներու վերջալոյսը» գրքին, որը լույս է տեսել 1968 թվականին: Ընդհանուր ակնարկ նետելով Սիմոն Սիմոնյանի մտածողությանը և աշխարհայացքին՝ այնուհետև անդրադարձել ենք գրքի այն կողմերին, որոնք, մեր կարծիքով, յուրատեսակ նորություն են հայ գրականության մեջ: Քանի որ «Լեռնականներու վերջալոյսը» հարուստ և բազմաշերտ ստեղծագործություն է, փորձել ենք դիտարկել գիրքը մի քանի տեսանկյուններից՝ ուշադրություն դարձնելով հատկապես սասունցի հերոսների բնավորության հիմնական գծերին ու աշխարհայացքին: Անդրադարձել ենք նաև ազգային – ազատագրական պայքարի թեմային, որը «Լեռնականներու վերջալոյսի» կարևոր հարցերից մեկն է:

Г. Арутюнян

Сасунские герои Симона Симоняна

Резюме

Эта статья посвящена книге армянского писателя из Ливана Симона Симоняна ,,Закат горцев''. Книга была издана в 1968 году. Бросая общий взгляд на мышление и стиль Симона Симоняна – как писателя, после мы

рассказываем о тех сторонах книги, которые, по нашему мнению, являются своеобразной новостью в армянской литературе. Так как ,,Закат горцев'' имеет богатое содержание и много слоев, мы попытались рассмотреть книгу из нескольких точек зрения – выдвигая на первый план мировоззрение сасунских героев и черты их характера. Мы так же обратились к теме освободительной борбы, которая является одной из ключевых тем ,,Заката горцев''.

G. Harutyunyan

Simon Simonyan's heroes from Sason

Summary

This article is devoted to the book of Armenian writer from Lebanon Simon Simonyan ''The sunset of mountaineers'' which was published in 1968. Throwing a general look at the mentality and style of Simon Simonyan as a writer, we later talked about the opinions proclaimed about this collection, and the novelty of the book with a few words. As the book ''The sunset of mountaineers'' has many slices and rich content we have tried to observe it by the several points of view which are important.

At first we have talked about the character of heroes from Sasoun. We have generally talked about the main traits of their character, their world view and psychology. Then we have talked about an important issue – the national struggle of Armenians for their freedom.